քել զհրովարտակն, այլ նա արար նոցա պատասխանի՝ թէ դաշնագիրքն եկեալ են այդր առ Եղիազար Կաթուղիկոսիս՝ և ոչ դարձեալ այսր, և զայլն չվստահիմք հանել արտաքս, դուցէ վտանգ ինչ պատահեսցի 'ի ճանապարհի՝ և զօրինակն հանել դժուարին առ 'ի չգոյէ դատաւորի և ծախուց. զլուս չարեացս այսոցիկ ցուցանէ լինել ըզ-Մուսա էֆէնաի նախկին Դպրապետ դատարանին Երուսաղէմի, զի կարի քաջ տեղեակ եւ հմուտ էր ամենայն անցից անցելոց երից ազգաց։ Իսկ նոցա տարակուսեալ 'ի վերայ ճախորդութեանցս այսոցիկ, խնդրեցին 'ի Ղալիպ էֆէնտեայ զպատճէնս հրովարտակաց զոր տուեալ էին յառաջագոյն, և եթեր զայնս Պաշպազիրկեան Յովհաննէս՝ թացեալ 'ի ջուր անձրեւաց՝ եղծեալ և անընթեռնլի, եւ եւուն վերստին օրինակել զայնս դժուարութեամբ, զի թերեւս կարելի լիցի ընդդիմանալ նոքօք ոսկեզօծ հրովարտակացն Յունաց։ Էանց միջոց ժամանակի՝ Հայք ոչ կարացին մատուցանել 'ի Դուռն զստոյգ հրովարտակս իւրեանց, որով հաստատէին զկարծիս Նախարարաց՝ չունել Հայոց զայնս՝ և զբանս Յունաց՝ որք ասէին՝ թէ հրովարտակք Հայոց կորուսեալ են 'ի Ծովային և 'ի ցամաքային ճանապարհի՝ 'ի դալ և 'ի գնալն 'ի Կոստանդինուպոլիս, փոքու իմն ծառայէին այսմ եւ միտք Հայոց. զի միշտ բացասութիւն ընկալան յերուսաղէմէ, թէպէտեւ դարձն անդ զցանկն հրովարտակաց բերեալ յերուսաղէմէ յաւուրս Շղթայակրի, այլ տարակուսեալ էին թէ դարձուցեա՞լ են զայնս վերստին յերուսաղէմ, թէ ոչ։

Ապա Կարապետ Աղնաւորեան եւ Գրիգոր Զէրեզեան յարգելիք՝ հմուտք Տաճկական դպրութեան, ձեռն արկին որոնել յարձանագրութիւնս Կայսերական դիւանաց, զի թերեւս մարթացին 'ի նոցանէ հանել զպատճէնս եղծեալ օրինակաց՝ այլ ոչ կարացին գտանել, և նախարարք Դրանն զիսկականն խնդրէին 'ի սաղրելոյ Յունաց. այսպէս անյաջող գտեալ զգործն՝ պաշարեցան Հայք 'ի տրտմութիւն մեծ, զի յամենայնի ընդդէմ ելանէին նոցա խոչք եւ հակառակք. նմին իրի արժան համարեցին լուել առ ժամանակ մի և սպասել այցելութեան Տեառն։

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ յարեաւ խռովութիւն մեծ